

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Պաշտոնի /զբաղմունքի/ անվանումը	Ռեժիսուրա (ըստ տեսակների)
I. Դերը՝	Օգնում է բեմադրող ռեժիսորին թատերական ներկայացումների, զանգվածային հանդիսությունների, խաղարկային և վավերագրական ֆիլմերի, ռադիո և հեռուստատեսային հաղորդումների նախագծերի պլանավորման, իրականացման, արխիվացման/ցուցադրման/ աշխատանքների կազմակերպմանը:
II. Խնդիրների բնագավառները	
Խնդիրների բնագավառ 1. Աշխատանքների պլանավում	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> - Նյութի (սցենարի) յուրացում: - Անհրաժեշտ մասնակիցների և գործող անձանց (արհեստավարժ, ոչ արհեստավարժ) և պահանջված տեխնիկայի և ռեկվիզիտների նախնական ընտրության կազմակերպում, լուսանկարում և ցուցակագրում, պայմանագրերի կնքում: - Նկարահանման վայրի ընտրություն, լուսանկարում կամ նկարահանում: - Ստեղծագործական խմբի աշխատանքների կազմակերպում: - Օրացուցային պլանավորում: - Նախնական փորձերի անցկացում, տեքստի վրա աշխատանք: Ներկայացման կամ ֆիլմի առանձին դրվագների նախնական բեմականացում:
Կատարման չափանիշներ	Նախապատրաստական աշխատանքները կատարված են համաձայն սցենարային պլանի:
Խնդիրների բնագավառ 2. Նախագծի իրականացում	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> - Մասնակիցների ներկայության ապահովում: - Աշխատանք դերասանական խմբի անդամների հետ (գործող անձինք, հանդիսատես, մասսայական տեսարանների համար մարդկանց խումբ և այլն): - Նկարահանումների սահուն ընթացքի ապահովում (տեքստի իմացություն, տեխնիկական միջոցների ժամանակին տեղադրում, ընդհանուր ձևավորման աշխատանքների ավարտ և տեղադրում՝ ըստ օրացուցային պլանի): - Առանձին խմբերի հետ ընթացիկ փորձերի անցկացում և նախապատրաստում նկարահանմանը և այլն: - Աշխատանք ղեկավարման վահանակի մոտ (թատերական ներկայացումներ, միջոցառումներ և հանդիսություններ):
Կատարման չափանիշներ	Ապահովված է աշխատանքային մթնոլորտ և նկարահանումների սահուն ընթացք՝ ըստ օրացուցային պլանի:
Խնդիրների բնագավառ 3. Նախագծի հանձնում	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> - Նկարահանված նյութերի կողավորում: - Մոնտաժային նախնական աշխատանքներ:

	<ul style="list-style-type: none"> - Ամբողջական կյուբի, ինչպես նաև առանձին տեսանյութերի, ձայնային ֆոնդի, երաժշտության արխիվացում: - Տեխնիկական միջոցների և օգտագործված պարագաների հանձնում:
Կատարման չափանիշներ	Ապահովված են նախագծի ավարտման և արխիվացման աշխատանքները:
Խնդիրների բնագավառ 4. Շարունակական աշխատանքներ	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> - Ներկայացումների շարունակական ցուցադրության ապահովում և կառավարում: - Ֆիլմերի շարունակական ցուցադրման, ազդագրերի, գովազդների ապահովում և կառավարում: - Հաղորդաշարի շարունակական նկարահանումների, ցուցադրության և գովազդման (անոնսների) ապահովում:
Կատարման չափանիշներ	Ապահովված են ներկայացումների, ֆիլմերի, հաղորդումների շարունակական աշխատանքներն ու ցուցադրությունները:
III. Պատասխանատվությունը	Պատասխանատու է բեմադրական և նկարահանումների նախապատրաստական աշխատանքների, աշխատանքային խմբերի համագործակցության և աշխատանքային նորմալ պայմանների ու մթնոլորտի ապահովման, անհարաժեշտ կյուբատեխնիկական բազայի հայթայթման, ապահովման և հանձնման աշխատանքների համար: Պատրաստի արտադրանքի գովազդման և շարունակական ցուցադրության ապահովման համար: Ամբողջ պայմանագրային, վարձակալական, առևտրային փաստաթղթերի ձևակերպման և հաշվառման համար:
IV. Լեզուները	Մայրենի լեզու՝ գերազանց Անվավազն երկու օտար լեզու՝ լավ
V. Համակարգիչը	Microsoft Word - լավ Adobe premiere - բավարար, Edius – բավարար, After effects- բավարար, Internet Explorer -լավ
VI. Գիտելիքները	Գրականության, արվեստի, երաժշտության, իրավաբանական, պատմության, լուսանկարչության ընդհանուր մակարդակի իմացություն:
VII. Կարողությունները և հմտությունները	Կարողանում է իրականացնել բեմադրման կամ նկարահանման կազմակերպչական նախապատրաստման և ընթացիկ աշխատանքները, կազմել ամբողջ փաստաթղթային գործառույթները, իրականացնել ավարտման և հանձնման աշխատանքները:
VIII. Վերաբերմունքը	Պարկեշտ, անկաշկանդ, պարտաճանաչ, պատասխանատու, պահանջկոտ, խնայող, կարգապահ, հաղորդակցվող, ճշտապահ, մաքրասեր, տեղեկացված, համեստ, հարգալից, նորարար, ընկերասեր: